

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18/1

8 ապրիլի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արմինե Սիմոնյանի 19.02.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ 01.02.2014 թ-ի թիվ 2125561 ստուգման ակտի դեմ:

Ա/Ձ Արմինե Սիմոնյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ կողմից 01.02.2014 թ-ին կազմված թիվ 2125561 ստուգման ակտը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ա.Դավթյանը՝ իր ամուսինն է և աշխատում է <Գելիեգուզան> ՍՊԸ-ում որպես օպերատոր (կից ներկայացվում է տեղեկանքը աշխատավայրից): Այլ փաստաթղթերի պահանջի դեպքում կներկայացվեն:

Ըստ գանգատի, ստուգման ակտում նշված անձինք աշխատանքային ծառայություններ չեն մատուցել: Բացի դա, անտեսվել է Ա/Ձ Արմինե Սիմոնյանի առարկությունը:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Արմինե Սիմոնյանը խնդրում է չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ 01.02.2014 թ-ի թիվ 2125561 ստուգման ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը մասամբ հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ պետի 20.12.2013 թ-ի թիվ 2125561 հանձնարարագրի Ա/Ձ Արմինե Սիմոնյանի մոտ կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում, որն ընդգրկել է 01.06.2009 թ-ից մինչև 22.01.2014 թ-ն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ 01.02.2014 թ-ի թիվ 2125561 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ):

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ Ա/Ձ Արմինե Սիմոնյանի մոտ Հերմինե Բարսամյանը (օպերատոր) և Արտակ Դավթյանը (օպերատոր) իրականացնում են վարձու աշխատողի պարտականություններ, սակայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չեն որպես վարձու աշխատողներ: Ստուգման պահին բացակայում էին գրավոր աշխատանքային պայմանագրերը, առկա չէր որևէ այլ անհատական իրավական ակտ: Տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ Աշխատանքային օրնսգրքի 14-րդ հոդվածի պահանջները:

Համաձայն <Եկամտային հարկի մասին> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետի, աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով

գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու դեպքում գործատուն տվյալ ամսում հաշվարկում և վճարում է յուրաքանչյուր (չձևակերպված) վարձու աշխատողի համար եկամտային հարկ 60.000 դրամի չափով, ընդամենը 120.000 դրամ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ստուգման ընթացքում՝ 16.01.2014 թ-ին, ստուգումն իրականացնող անձանց կողմից կազմվել է արձանագրություն, որը հանդիսանում է ստուգման ակտի անբաժանելի մասը:

Արձանագրությունում նշվել է, որ Ա/Ձ Արմինե Սիմոնյանի մոտ ք.Մեղրի, Փարամազի 6/2 հասցեում գործող ինտերնետ ակումբում իրականացված ստուգման ընթացքում պարզվել է, որ Հերմինե Բարսամյանի (օպերատոր) և Արտակ Դավթյանի (օպերատոր) աշխատանքի ընդունումը գործատուի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չէ: Արձանագրությունը ստորագրված է ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց, Ա/Ձ Արմինե Սիմոնյանի, ինչպես նաև Հերմինե Բարսամյանի և Արտակ Դավթյանի կողմից: Ընդ որում, արձանագրությունում Ա/Ձ Արմինե Սիմոնյանի կողմից չի կատարվել որևէ նշագրում արձանագրված փաստի վերաբերյալ համաձայն չլինելու վերաբերյալ:

Բացի այդ, 16.01.2014 թ-ին կազմված բացատրություն վերցնելու վերաբերյալ արձանագրությունում Ա/Ձ Արմինե Սիմոնյանը գրավոր նշել է, որ. «Ձեր բանավոր հարցին, թե քաղաքացիներ Հերմինե Ավագի Բարսամյանը և Արտակ Դավթի Դավթյանը ստուգման պահին ինչպիսի գործունեություն էին իրականացնում ինձ պատկանող ինտերնետ ակումբում, պատասխանում եմ, որ Հերմինե Բարսամյանը զբաղվածության կենտրոնում գրանցված է որպես անգործ և իմ մոտ որպես փորձաշրճան անցնում է 2013 թ-ի դեկտեմբեր ամսից: Իսկ Արտակ Դավթի Դավթյանը մի քանի օր է ինչ դիմել է և փորձում է աշխատել: Վերոնշյալ երկու անձանց հետ ես որևիցե աշխատանքային պայմանագիր կամ անհատական իրավական ակտ դեռ չեմ կնքել»:

Բացատրություն վերցնելու վերաբերյալ 16.01.2014 թ-ի արձանագրությունը ստորագրված է Ա/Ձ Արմինե Սիմոնյանի կողմից:

Սույն գործում առկա է Ա/Ձ Արմինե Սիմոնյանի և Հերմինե Ավագի Բարսամյանի միջև 08.01.2014 թ-ին կնքված աշխատանքային պայմանագիրը, որը Հանձնաժողովի համոզմամբ չի կարող որպես հիմնավոր ապացույց համարվել, քանի որ Ա/Ձ Արմինե Սիմոնյանը 16.01.2014 թ-ին տված բացատրության մեջ նշել է, որ վերոնշյալ երկու անձանց հետ ես որևիցե աշխատանքային պայմանագիր կամ անհատական իրավական ակտ դեռ չի կնքել: Այսինքն, գործում առկա փաստերը վկայում են այն մասին, որ Ա/Ձ Արմինե Սիմոնյանի և Հերմինե Բարսամյանի միջև աշխատանքային պայմանագիրը կնքվել է ոչ թե 08.01.2014 թ-ին, այլ՝ համապատասխան խախտումն արձանագրվելուց հետո:

Ինչ վերաբերվում է Արտակ Դավթյանին, ապա սույն գործում առկա է «Գեյլիեգուզան» ՍՊԸ տնօրենի 11.02.2014 թ-ի թիվ 02 տեղեկանքը, որի համաձայն Արտակ Դավթյանը 01.08.2013 թ-ից առ 11.02.2014 թ-ը աշխատում է «Գեյլիեգուզան» ՍՊԸ-ում որպես օպերատոր և նրա ամսական բազային եկամուտը կազմում է 92592 դրամ:

«Գեյլիեգուզան» ՍՊԸ տնօրենի 11.02.2014 թ-ի թիվ 02 տեղեկանքում բերված փաստարկները համապատասխանում են իրականությանը՝ դրանց իսկությունը

ստուգվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում առկա տեղեկատվական բազայում առկա տվյալների միջոցով:

Հանձնաժողովի 25.03.2014 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտի 1-ին կետից նվազեցվել է ընդամենը 60.000 դրամ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ):

Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ 01.02.2014 թ-ի թիվ 2125561 ստուգման ակտի 1-ին կետից նվազեցնել է ընդամենը 60.000 դրամ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ